

Պատկերացրեք՝ մենք բրինձ ենք կամ ձավար: Մեզ չեն հարցնում, թե մեզանից ինչ են պատրաստելու, կամ էլ մենք այնքան անգրագետ ենք, որ չենք ուզում հավատալ, թե ինչ կարող են մեզանից պատրաստել: Մեզ լվանում են և լցնում ջրի մեջ, մեզ եռացնում են՝ ամանի մեջ լցնելով կարտոֆիլ , կաղամբ , գազար և հազար ու մի տարբեր համեմունքներ: Մեկ է, մենք դեռ չգիտենք, թե ինչ են մեզանից պատրաստում. երբ մենք և մեր նմանները եփվում են, ավելացվում է սոխեռած, և մենք դառնում ենք համով ապուր: Երբ մոտենում է ճաշի ժամանակը, սեղանի մոտ հավաքվում են մեր բարեկամները և թշնամիները՝ մեզանից անկախ:

Մատուցողը շերեփով խառնում է ապուրը և ամեն մեկին իր հայեցողությամբ լցնում նրանց ափսեմ, մեկին շատ բրինձ է պետք, մյուսին՝ շատ կարտոֆիլ, իսկ մյուսին՝ շատ գազար: Մենք, գտնվելով ափսեմների մեջ, նոր ենք հասկանում , թե ում բաժինն ենք և ինչի հասանք, սկսում ենք ճչալ , բայց, ցավոք, սեղանակիցները զբաղված են իրենց գործով, նրանք այդ ճիչը համարում են որպես շնորհակալության նշան , որ մենք արժանացել ենք պատվի: Իսկ այդ թանձր շերտով բրինձը, որը նստած է կաթսայի հատակին, ունակ չէ լսելու այդ ճիչը, քանի որ ապահով նստած է կաթսայի հատակին և հոլսով է , որ լավ մարդու բաժին կդառնա: Ճաշի ամանի միջի թերմացքը լցնելով մնացած մասսայի վրա՝ լցնում են ամանի մեջ և տալիս անտուն շներին: Շները մեծ գոհունակությամբ ուտում են մնացորդները և լպստում կեղտոտ ամանները՝ մտովի սպասելով մյուս անգամվան: Մենք, տեսնելով շնիկի հրճվանքը, ոգևորվում ենք. վերջապես ինչ-որ մեկին պետք եկանք ի սրտե: Եվ կենտրոնացնում ենք մեր ունեցած գիտական և մտավոր հնարավորությունները, սկսում ենք ստեղծել տարբեր գույնի բրինձներ, քանդակում ենք բրնձի հատիկների վրա, որ ավելի շատ դուր գանք շներին: Անցնում են հարյուրամյակները, բայց այդպես էլ հավատացել ենք սուտ ու քաղցր խոսքին և զոհաբերվել անսանձ արարածների համար: Հարգելի՛ ուսուցիչներ և ծնողներ, աշխարհը շատ է փոխվել, պետք չէ երեխաներին դարձնել այնպիսին, ինչպիսին դուք եք, պետք է որ նրանք սովորեն և առաջ շարժվեն աշխարհի առաջադեմ կրթական համակարգով

/ Սկանդինավյան երկրների, Անգլիայի, Գերմանիայի, ֆրանսիայի, Իսրայելի օրինակներով/:

Դրա համար շատ մեծ ջանք ու խելք էլ ունենալ պետք չէ, ուղղակի վերցնել ու կրկնել այն, ինչը աշխարհը ծրագրված տանում է առաջ, բայց չգիտես ինչու, մենք ձգտում ենք ստրկության. միգուցե մեր պատմությունն է սխալ, հեքիաթներն են վատը, փիլիսոփայությունն է տկար կամ մտավորականներն են նյութապաշտ: Հուսանք՝ իշխանությունները կանեն ճիշտ հետևություններ, և 22-րդ դարը

Կդիմավորենք որպես ազատ, անկախ, հզոր հայրենիք ունեցող  
մարդիկ:

Հակոբ Սարիբեկյան

Վերին Գետաշեն